

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2017թ. հունիսի 28 –ի նիստի /արձ.10/

1. 2016-2017 ուս. տարվա ավարտական քննաշրջանի արդյունքների վերաբերյալ ԱԱՀ նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն,

1.1 հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին 2017-2018 ուս. տարում ավարտական աշխատանքների գործընթացը կազմակերպելիս հաշվի առնել ԱԱՀ նախագահների դիտողությունները և առաջարկները,

1.2 սույն որոշման վերահսկողությունը վերապահել ֆակուլտետների ղեկաններին,

1.3 հավանություն տալ Կինոարվեստ մասնագիտության ԱԱՀ նախագահ Մ. Պողոսյանի առաջարկին՝ նամակով դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը, առաջարկել կինոֆակուլտետի լավագույն շրջանավարտներին ընդգրկել կինոարտադրության մեջ:

2. Արձանագրել, որ պրոֆեսորադասախոսական թափուր պաշտոնների տեղակալման նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

2.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

2.1.1 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.4.1 կետի համաձայն ԱԳԹ Կարեն Պավելի Ղազարյանը միաձայն ընտրվել է դոցենտի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Գեղագիտություն» առարկան,

2.1.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն Կարինե Միքայելի Մուսայելյանը միաձայն ընտրվել է ավագ դասախոսի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Գրականության տեսություն» և «Ստեղծագործական հոգեբանություն» առարկաները,

2.1.3 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ԵԹԿՊԻ-ի պրոֆետորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի 2.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն Լիլիան Միխաելի Հովակիմյանը միաձայն ընտրվել է ավագ դասախոսի պաշտոնում՝ 1 դր. ծանրաբեռնվածությամբ դասավանդելու «Ռուս գրականություն» առարկան,

2.1.4. առաջարկել ռեկտորին մրցույթով ընտրված դասախոսների հետ կնքել աշխատանքային պայմանագրեր՝ սահմանված կարգով,

2.1.5 պրոֆետորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման նպատակով կազմակերպված մրցույթի արդյունքներն ուժի մեջ համարել ա.թ. սեպտեմբերի 1-ից:

2.2 Դիմումներ չլինելու պատճառով «Անգլերեն» առարկայի համար մեկական դրույքով ավագ դասախոսի երկու տեղի համար հայտարարված մրցույթը համարել չկայացած և տեղերը համարել թափուր:

3. Հաստատել և ա.թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դնել «Ուսումնական աշխատանքների և վարձատրության հաշվարկի նորմերը (բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի ՄԿԾ-ներ՝ առկա և հեռակա) »:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան